

2022-2023 ուստարվա ֆիզիկա առարկայից կատարած
ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն

ուսուցիչ՝ Կ.Սիմոնյան

2022-2023 ուստարվա համար մեթոդիավորման կողմից քննարկվել և հաստատվել է ֆիզիկա առարկայի թեմատիկ պլանները, որոնք կազմված են ԿԳՄՄ- ի կողմից հաստատված առարկայական ծրագրերի և չափորոշիչների հիման վրա: Տնօրենությանը ամեն օր ներկայացվել է դասի պլանների առձանագրությունները և հաստատվել :

- 7-ից 9-րդ դասարաններում դասավանդել եմ ֆիզիկա առարկա:
- Դասերին հաճախակի օգտագործվել են դիտակտիկ նյութեր , կատարել փորձեր և լաբորատոր աշխատանքներ՝ դասանյութը ավելի մատչելի և հետաքրքիր դարձնելու համար:
- Կազմվել են թեմատիկ զրավոր աշխատանքների թեստեր 1-ին և 2-րդ կիսամյակների համար, որոնցում առկա է եռամսյակային մոտեցումը:
- Մասնակցել եմ մեթոդիավորման կողմից կազմակերպված նիստերին, որոնց ներկայացել եմ զեկույցներով:
- 9-րդ դասարանի երեք աշակերտներ մասնակցել են ֆիզիկա առարկայի օլիմպիադայի դպրոցական փուլին :
- Երկրորդ կիսամյակում՝ 7-րդ դասարանում անց եմ կացրել բաց դաս՝ «Մթնոլորտային ճնշում >> թեմայով:
- Վերլուծելով աշակերտների առաջադիմության որակը՝ 1-ին և 2-րդ կիսամյակներում եկա հետևյալ եզրակացության.
 - 8 և 9դասարանների ուսման որակը 2-րդ կիսամյակում ավելի բարձր է: Աշակերտները ընտելացան առարկային և ուսուցչի պահանջներին:
 - 7-րդ դասարաններում 2-րդ կիսամյակում ուսման որակը որոշ նվազել է:Պատճառն այն է , որ թեմաները այդ տարիքի համար դժվար են յուրացվում: Ցանրալի է ավելացնել ժամաքանակը:
 - 8-րդ «բ» դասարանում ուսման որակը 1- ին կիսամյակում 35%, 2-րդ կիսամյակում աճել է մինչև 46 %:Պատճառն այն է, որ աշակերտները դժվարանում են կատարել հաշվարկներ, դասարանում կան շատ թույլ աշակերտներ:Անհրաժեշտ է ավելի շատ համագործակցել մաթեմատիկայի ուսուցիչների հետ և ավելի հաճախակի կատարել դասալսումներ:
- Մասնակցել եմ նոր ՀՊԶ-ի վերապատրաստմանը :
- Կազմակերպել եմ արտաժամյա անվճար լրացուցիչ պարապմունքներ քիմիա առարկայի որակի բարձրացման նպատակով::